նել հետևակներին։ Թեև քաղաքը ավերման ենթարկվեց. «բայց ի բերդն ոչ ինչ կարացին ձեռնարկել, այլ գնացին անդրէն ի տեղի իւրեանց։ Ահա այս իսկ եղև սկիզբն աւերման աշխարհին»...

Կապան քաղաքի խղճուկ մնացորդներն են, որ այժմ երևում են թրքաբընակ Ջրախոր գյուղի մոտ և գյուղի մեջ։ Այստեղ են գտնվում Կապանի հանքերի և ձուլարանի էլեկտրակայանի գլխի շինությունները։ Ողջի (Օխչի) գետի հովիտն այդտեղ նեղանում է, լանջերը ստանում են զառիթափ ապառաժների բնույթ, ամրություններ իսկ որ «կապում են» կիրճը, հարավում ընդհուպ կըպչելով քարաժայռերին, իսկ հյուսիսում վերջանալով արագավազ, փրփրալի գահավիժող գետի կտրած ափին։ Միջին տարածությունը գրաված է բլուրը, որի մեկ և մյուս կողմով հարավից հյուսիս ուղղությամբ ձգվում էին պարիսպները, որոնց միայն հետքերն են այժմ նշմարվում։ Պարիսպների հարավային հատվածները անցնում են դեպի քաղաքն իջնող հեղեղատի փորած ձորի մյուս ափը և ընդհուպ կպչում սեպ բարձրացող քարաժայռերին։ Պարզ երևում են այժմյան ճանապարհի աջ և ձախ կողմերում քաղաքի դարպասի մնացորդները։ Բլրի բարձր հրապարակի վրա գտնվում է ավերակ թաղակապ մի եկեղեցի. նրանից հարավ-արևմուտքում՝ մի ավերակ մատուռ։ Հին շենքերի այլ և այլ հետքեր խառնված են նոր գյուղի շենքերի հետ։ Գյուղացիք իրենց տների համար օգտագործել են հին կառուցումների քարերը՝ այն «մեծ աւարի հեղեղատն» որով— ըստ պատմագրի— «օր մի յանկարծակի մինչ կային յանհոգութեան քաղաքացիքն» ...«անիծեալ Ջորթման վասն քինուն իւր յեղակարծում ժամու հեղաւ ի վերայ քաղաքին»[33]։

Հեղեղատն լայն սկսվում է անմիջապես ժայռերի տակից և ընթանալով քաղաքի արևելյան կողմով՝ նեղ վերջանում է։

Ջրախորի դիմաց, գետի ձախ ափին, մի ապառաժի վրա կառուցված է աշտարակ-դիտարան։ Մի այլ աշտարակ ցցված է ժայռերի գլխին գյուղից հարավ-արևմտյան ուղղությամբ, իր բարձրությամբ Բաղաբերդին գրեթե հավասար դիրքով։ Ավանդությամբ պատմում են, որ այդ աշտարակը կապված է եղել Բաղաբերդի հետ զնջիլով՝ շղթայով, որով հաղորդակցություն է պահպանվել ձորի վրայով երկու ափերի միջև։

Շատ ավելի անառիկ է եղել «զապավէնն ամենեցուն և զտեղի ապաստանի ամուրն զԲաղաբերդ»[34], որին տեղացիք այժմ Դավիթ Բեկի բերդ անունն են տալիս, քանի որ XVIII դ. սկզբի ժողովրդական ապստամբության այդ կազմակերպիչն ու առաջնորդը այդ տեղն էր ընտրել իր ռազմական գործողությունների հենակետ։ Բերդը գտնվում է գրեթե Ջրախորի հանդեպ, հազիվ մի կես երեք քառորդ կիլոմետր հեռավորության վրա, գետի հոսանքով վեր, դեռ չհասած Գեղվա գետի բերանին, սրա Ողջի (Օխչի) գետի մեջ թափվելուց ներքև։ Այստեղ երկրակեղևի հուժկու նստվածքների շերտերը շրջված են և կանգնեցրած են գրեթե ուղղաձիգ հյուսիսից հարավ ուղղությամբ Ստորին (Ներքին) Գիրաթաղ գյուղի արևմուտքով և հատվում են Ողջի (Օխչի) գետի փորած ձորի գլխին բարձրադիր, մերկ ժայռոտ կողերով։ Այս ժայռերն են, որ պատմագիրը հիշում է որպես Բաղակի քար[35]։ Այս քարի գլխին վեր ցցվող ողնաշարի վրա,

---

33 Օրբէլեան Ստ., Գլ., ԿԱ, էջ 333, 334։

34 Անդ., գլ. ԿԱ, էջ 335։

35 Անդ., գլ. Գ, և ԿԱ, էջ 13, 335։